ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1266-Ա « 24 » հոկտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ «ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով, նպատակ ունենալով ուսումնասիրել Երևանի «Բագրատունյաց» առողջության կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) գործունեության ընթացքում առաջացած խնդիրները.

1. Սույն թվականի հոկտեմբերի 28-ից դեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել Կազմակերպության 2023 թվականի գործունեության ուսումնասիրություն:

2. Ուսումնասիրության իրականացման համար ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Աշխատանքային խմբի ղեկավար

Աննա Գևորգյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Աշխատանքային խմբի անդամներ

Խաչատուր Տոնոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար
Բագրատ Պողոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ
Վահե Ամիրաղյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Տաթևիկ Քոչարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ
Սամվել Մխիթարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ
Սմբատ Աբովյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար
Արման Առաքելյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության առաջին կարգի մասնագետ
Աննա Արշակյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

3.Կազմակերպության տնօրենին՝ ուսումնասիրության իրականացման ժամանակահատվածում աշխատանքային խմբին ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններով, տեղեկատվությամբ, ծրագրային հասանելիությամբ և պահանջվող փաստաթղթերով:

4.Աշխատանքային խմբին՝ ուսումնասիրությունն ավարտելուց հետո, արդյունքներն ամփոփել և ներկայացնել Երևանի քաղաքապետին:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ